

**ՎԱՐԿԱՅԻՆ ՊՈՐՏՖԵԼԻ ԱՐԺԵԹՂԹԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ Ի-Ի ԿՈՂՄԻՑ
ԹՈՂԱՐԿՎԱԾ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐԻ ԵՎ
ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ**

1. Համաձայն «ՎԱՐԿԱՅԻՆ ՊՈՐՏՖԵԼԻ ԱՐԺԵԹՂԹԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ Ի» արժեթղթավորման հիմնադրամի /այսուհետ՝ Հիմնադրամի/ կառավարիչ «Կապիտալ Ինվեստմենթս» ՓԲԸ-ի գլխավոր տնօրենի թիվ Կ/4 որոշման՝ Հիմնադրամը 2016 թվականի հունիսի 14-ին կատարեց դրամային և դոլարային պարտատոմսերի արժեկտրոնի վճարում և մայր գումարի մասնակի վճարում ներդրողներին:

- **Դրամային պարտատոմսերի արժեկտրոն:** Հիմնադրամը թողարկված ընդհանուր 44,626 հատ պարտատոմսերի համար հաշվարկել և վճարել է 14,338,333.80 ՀՀ դրամ գումարի չափով արժեկտրոն՝ հիմք ընդունելով մեկ պարտատոմսի դիմաց հաշվարկված արժեկտրոնը 321.30 ՀՀ դրամ:
- **Դոլարային պարտատոմսերի արժեկտրոն:** Թողարկված մեկ պարտատոմսի դիմաց հաշվարկվել է 1.6711 ԱՄՆ դոլար արժեկտրոն, որը, հիմք ընդունելով ԿԲ կողմից 13.03.2016թ. հրապարակված 478.29 փոխարժեքը, համարժեք է 799.2704, իսկ մինչև տասնորդական կլորացման արդյունքում՝ 799.3 ՀՀ դրամին: Հիմնադրամը թողարկված ընդհանուր 11,328 հատ դոլարային պարտատոմսերի համար վճարել է 9,054,470.40 ՀՀ դրամ գումարի չափով արժեկտրոն:
- **Դրամային պարտատոմսերի մայր գումարի մասնակի մարում:** 2016 թվականի մարտի 14-ից մինչև հունիսի 14-ը կատարվել և Հիմնադրամի հաշվին փոխանցվել է 72,914,196.0 ՀՀ դրամ վարկի մայր գումարի մարում: Հիմնադրամի կողմից կատարված և մինչև 14/06/2016թ. հաշվեգրված ծախսերը նվազեցնելուց հետո մատչելի միջոցները կազմել են 91,326,084.0 ՀՀ դրամ, որը հաշվարկված 14,338,333.80 դրամ արժեկտրոնի գումարը նվազեցնելուց հետո կազմել է 76,987,750.20 դրամ: Ստացված գումարը, որի հաշվին պետք է կատարվի պարտատոմսերի մայր գումարի մասնակի մարում ավելին է, քան վճարման ենթակա 73,228,783.90 դրամը, որը ստացվել է 72,914,196.0 դրամին ավելացնելով նախորդ վճարման օրը վճարման ենթակա գումարի չվճարված մասը՝ 314,587.90 դրամը: Ելնելով մեկ պարտատոմսի անվանական արժեքի և երրորդ եռամսյակում վճարվող մեկ պարտատոմսի արժեկտրոնի՝ մինչև տասնորդական կլորացման ամհրաժեշտությունից, հաշվարկված և վճարման ենթակա 73,228,783.90 դրամը նվազեցվել է 42,143.90 դրամով, և մնացորդ գումարը ուղղվել է պարտատոմսերի մասնակի մարմանը¹: **Հիմնադրամը մեկ**

¹ Վճարման ենթակա 73,228,783.90 դրամ գումարը ճշգրտվել է այնպիսի ամենափոքր գումարով, որի պարագայում պարտատոմսերի մասնակի մարման արդյունքում մեկ պարտատոմսի հաջորդ եռամսյակի համար վճարվելիք արժեկտրոնը կլինի 0.1 դրամի ճշտությամբ:

պարտատոմսի համար կատարել է 1,640 դրամ, իսկ ընդհանուր 44,626 հատ պարտատոմսերի համար՝ 73,186,640.0 դրամ մասնակի մարում: Արդյունքում՝ Հիմնադրամը կատարել է 42,143.90 դրամ գումարի չափով պարտատոմսերի մայր գումարի պակաս մարում, քան հաշվարկվել է (մեկ պարտատոմսի համար՝ 94 լումա):

Մատչելի միջոցների հաշվարկը և բաշխումը ներկայացված է Հավելված 1-ում, իսկ Հիմնադրամին փաստացի կատարված վարկի մայր գումարների մարումների բաշխվածությունը ըստ նախաձեռնող վարկային կազմակերպությունների և դրանց շեղումները՝ Հավելված 2-ում:


- **Դոլարային պարտատոմսերի մայր գումարի մասնակի մարում:** 2016 թվականի մարտի 14-ից մինչև հունիսի 14-ը կատարվել և Հիմնադրամի հաշվին փոխանցվել է 225,071.66 ԱՄՆ դոլար վարկի մայր գումարի մարում: Հիմնադրամի կողմից կատարված և մինչև 14/06/2016թ. հաշվեգրված ծախսերը նվազեցնելուց հետո մատչելի միջոցները կազմել են 261,000.49 ԱՄՆ դոլար, որը հաշվարկված 18,930.22 դոլար արժեկտրոնի գումարը նվազեցնելուց հետո կազմել է 242,070.27 դոլար: Ստացված գումարը, որի հաշվին պետք է կատարվի պարտատոմսերի մայր գումարի մասնակի մարում ավելին է, քան վճարման ենթակա 224,059.67 դոլար գումարը, որը ստացվել է 225,071.66 դոլարը նվազեցնելով նախորդ վճարման օրը վճարման ենթակա գումարից ավել վճարված մասը՝ 1,011.99 դոլարը: Ելնելով մեկ պարտատոմսի անվանական արժեքի և երրորդ եռամսյակում վճարվող մեկ պարտատոմսի արժեկտրոնի՝ մինչև տասնազարեորդական կլորացման ամիրաժեշտությունից, հաշվարկված և վճարման ենթակա 224,059.67 դոլարը նվազեցվել է 218.39 դոլարով, և մնացորդ գումարը ուղղվել է պարտատոմսերի մասնակի մարմանը²: **Հիմնադրամը մեկ պարտատոմսի համար կատարել է 19.76 ԱՄՆ դոլար, իսկ ընդհանուր 11,328 հատ պարտատոմսերի համար՝ 223,841.28 ԱՄՆ դոլար մասնակի մարում:** Արդյունքում՝ Հիմնադրամը կատարել է 218.39 ԱՄՆ դոլար գումարի չափով պարտատոմսերի մայր գումարի պակաս մարում, քան հաշվարկվել է (մեկ պարտատոմսի համար՝ 0.02 դոլար):

2. Պարտատոմսերի մասնակի մարման արդյունքում 8,568 ՀՀ դրամ անվանական արժեքով պարտատոմսերը փոխարկվել են 6,928 ՀՀ դրամ անվանական արժեքով պարտատոմսերով, իսկ 78.64 ԱՄՆ դոլար անվանական արժեքով պարտատոմսերը փոխարկվել են 58.88 ԱՄՆ դոլար անվանական արժեքով պարտատոմսերով:

² Վճարման ենթակա 224,059.67 դոլար գումարը ճշգրտվել է այնպիսի ամենափոքր գումարով, որի պարագայում պարտատոմսերի մասնակի մարման արդյունքում մեկ պարտատոմսի հաջորդ եռամսյակի համար վճարվելիք արժեկտրոնը կլինի 0.0001 դոլարի ճշտությամբ:

3. 2016 թվականի հունիսի 14-ին պարտատոմսի սեփականատերերին վճարումներ կատարելուց հետո թողարկված 44,626 հատ դրամային պարտատոմսերի անվանական արժեքը կազմել է **309,168,928.0** ՀՀ դրամ:
4. 2016 թվականի հունիսի 14-ին պարտատոմսի սեփականատերերին վճարումներ կատարելուց հետո թողարկված դոլարային 11,328 հատ պարտատոմսերի անվանական արժեքը կազմել է **666,992.64** ԱՄՆ դոլար:
5. Պարտատոմս/Ակտիվ հարաբերակցությունը դրամային և դոլարային պարտատոմսերի համար կազմում է համապատասխանաբար 86.2% և 84.1%: Ընդ որում 2016 թվականի հունիսի 14-ի դրությամբ դրամային վարկերի քանակը 286 է 358,743,921.60 ՀՀ դրամ մնացորդային արժեքով, իսկ դոլարային վարկերի քանակը 233 է 792,949.24 ԱՄՆ դոլար մնացորդային արժեքով:
6. 2016 թվականի սեպտեմբերի 14-ին Հիմնադրամը կվճարի մեկ դրամային պարտատոմսի համար 259.80 ՀՀ դրամ արժեկտրոն, իսկ մեկ դոլարային պարտատոմսի համար 1.2512 ԱՄՆ դոլար արժեկտրոն:

Տիգրան Կարապետյան



Արժեթղթավորման հիմնադրամի կառավարիչ՝

«Կապիտալ Ինվեստմենթս» ՓԲԸ

Գլխավոր տնօրեն

15 հունիսի, 2016թ.

Հիմնադրամի կողմից թողարկված պարտատոմսերի վերաբերյալ
էական փաստերի եվ տեղեկությունների բացահայտման

14.06.2016թ. ժամը 00.00 դրությամբ դրամային և դոլարային պարտատոմսերի վճարման համար Մատչելի միջոցների հաշվարկ

	Դրամային	Դոլարային
Դրամական ներհոսք 14/03/16 - 13/06/16 ժամանակաշրջանի ընթացքում		
Վարկառուների կողմից փաստացի կատարված վարկի մարումներ	72,914,196.00	225,071.66
Վարկառուների կողմից վճարված տոկոսագումարներ	19,732,102.50	39,595.65
Վարկառուների կողմից վճարված տույժեր, տուգանքներ	613,550.10	4,300.29
Վարկառուների կողմից վճարված այլ վճարներ	1,201,020.00	-
Ընդամենը ներհոսք	94,460,868.60	268,967.60
Հիմնադրամի կողմից կատարված և մինչև 14/06/2016թ. հաշվեգրված կանոնադրությամբ նախատեսված ծախսեր		
Կառավարման վարձ	797,532.8	2,324.47
Ակտիվների սպասարկման վարձ	743,576.4	1,629.53
Շուկա ստեղծողի վճար	240,936.4	561.35
Պարտատոմսերի սեփականատերերի գործակալի վճար	94,753.4	240.96
Պարտատոմսերի ցուցակման և պահպանման վճար	102,850.0	212.15
Արժեթղթերի պահառության վճար	31,158.3	72.9
ԱՄՆ ՄՁԳ երաշխավորության վճար	217,963.4	490.43
Աուդիտի վճար	902,413.8	2,294.81
Բանկային հաշիվների սպասարկման ծառայությունների վճար	3,600.0	140.53
Ընդամենը կատարված և հաշվեգրված ծախսեր (նվազեցումներ)	3,134,784.6	7,967.11
Մատչելի միջոցներ 14/06/16թ. դրությամբ	91,326,084.0	261,000.49

Մատչելի միջոցների բաշխումը

	Դրամային	Դոլարային
Մատչելի միջոցներ 14/06/16թ. դրությամբ	91,326,084.00	261,000.49
Արժեկտրոնի վճարում բոլոր պարտատոմսի համար	14,338,333.80	18,930.22
Արժեկտրոնի վճարում 1 պարտատոմսի համար	321.30	1.6711
Պարտատոմսերի քանակ	44,626	11,328
Մատչելի միջոցներ արժեկտրոնների վճարումից հետո	76,987,750.20	242,070.27
Հաշվարկված վճարման ենթակա պարտատոմսի մայր գումար	73,228,783.90	224,059.67
Վարկառուների կողմից փաստացի կատարված վարկի մարումներ	72,914,196.00	225,071.66
Նախորդ վճարման օրը վճ. ենթակա գումարից չվճարված կամ ավել վճարված մասը	314,587.90	1,011.99
Պարտատոմսի վճարման ենթակա մայր գումար	73,228,783.90	224,059.67
Ճշգրտում կապված մեկ պարտատոմսի անվ. արժեքի կլորացման հետ	- 42,143.90	- 218.39
Պարտատոմսի մայր գումարի վճարում	73,186,640.00	223,841.28
Մայր գումարի վճարում 1 պարտատոմսի համար	1,640.00	19.76
Մնացորդային սարեղի հաշվի համալրում	3,801,110.20	18,228.99

Հիմնադրամի կողմից թողարկված պարտատոմսերի վերաբերյալ
էական փաստերի եվ տեղեկությունների բացահայտման

Փաստացի կատարված և Հիմնադրամին փոխանցված վարկի մայր գումարների մարումների բաշխվածությունը ըստ նախաձեռնող վարկային կազմակերպությունների և դրանց շեղումները կանխատեսվածից

ՈՒՎԿ	Գրաֆիկով սահմանված մարում	Վաղաժամկետ մարում	Ընդամենը մարում	Շեղում գրաֆից	Ազդագրում կանխատեսված մարում	Շեղում ազդագրում կան նախատեսված վածից
ԴՐԱՄ						
ՔԱՐԴ ԱզրոԿրեդիտ ՓԲԸ	17,157,577.2	4,446,606.8	21,604,184.0	25.9%		
Գլոբալ Կրեդիտ ՓԲԸ	8,050,600.6	5,728,296.1	13,778,896.7	71.2%		
Գառնի Ինվեստ ՓԲԸ	5,773,970.5	1,561,750.6	7,335,721.1	27.0%		
Նոր Հորիզոն ՍՊԸ	3,475,887.6	1,714,961.1	5,190,848.7	49.3%		
Կամուրջ ՓԲԸ	17,098,150.0	7,906,395.5	25,004,545.5	46.2%		
ԸՆԴԱՄԵՆԸ	51,556,185.9	21,358,010.1	72,914,196.0	41.4%	64,659,471.5	12.8%
ԴՈԼԱՐ						
Գլոբալ Կրեդիտ ՓԲԸ	24,133.54	24,444.33	48,577.87	101.3%		
Նոր Հորիզոն ՍՊԸ	52,456.39	79,956.40	132,412.79	152.4%		
Կամուրջ ՓԲԸ	34,732.03	9,348.97	44,081.00	26.9%		
ԸՆԴԱՄԵՆԸ	111,321.96	113,749.70	225,071.66	102.2%	152,097.29	48.0%